No. 53134*

Lithuania
and
Armenia

Agreement between the Government of the Republic of Lithuania and the Government of the Republic of Armenia on cooperation in the field of culture. Vilnius, 26 January 2012

Entry into force: *27 June 2014 by notification, in accordance with article 14*

Authentic texts: *Armenian, English and Lithuanian*

Registration with the Secretariat of the United Nations: *Lithuania, 23 December 2015*

**No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

Lituanie
et
Arménie

Accord entre le Gouvernement de la République de Lituanie et le Gouvernement de la République d'Arménie relatif à la coopération dans le domaine de la culture. Vilnius, 26 janvier 2012

Entrée en vigueur : *27 juin 2014 par notification, conformément à l'article 14*

Textes authentiques : *arménien, anglais et lituanien*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Lituanie, 23 décembre 2015*

**Le numéro de volume RTNU n'a pas encore été établi pour ce dossier. Les textes reproduits ci-dessous, s'ils sont disponibles, sont les textes authentiques de l'accord/pièce jointe d'action tel que soumises pour l'enregistrement et publication au Secrétariat. Pour référence, ils ont été présentés sous forme de la pagination consécutive. Les traductions, s'ils sont inclus, ne sont pas en form finale et sont fournies uniquement à titre d'information.*

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Լիտվայի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին

Լիտվայի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ «Կողմեր»),

ձգտելով ամրապնդել և զարգացնել մշակույթի բնագավառում հետագա համագործակցությունը,

համոզված լինելով, որ մշակույթի բնագավառում համագործակցությունը կնպաստի երկու ժողովուրդների բարեկամությանը և փոխըմբռնմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, սույն Համաձայնագրով համաձայնվում են համագործակցել մշակույթի բնագավառում՝ միջազգային պարտավորությունների և իրենց երկրների ազգային օրենսդրությանը համապատասխան: Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը կկնքեն երկկողմ համագործակցության ծրագրեր:

Կողմերի միջև համագործակցությունը կապահովի երաժշտության, թատրոնի, կինեմատոգրաֆիայի, կերպարվեստի, գրականության, գրադարանագիտության և թանգարանագիտության, մշակութային արժեքների պահպանության, կրկեսային արվեստի, ինքնագործունեության, արհեստագործության և մշակույթին առնչվող այլ ոլորտներում տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաև Կողմերը միջոցներ

կձեռնարկեն այս ոլորտների ներկայացուցիչների մասնակցությունը միջազգային փառատոներին ապահովելու համար:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի իրագործման համար Կողմերի իրավասու մարմինների միջև կստորգարվեն երկկողմ համագործակցության ծրագրեր, որոնք կամրագրեն փոխադարձ համագործակցության ընթացակարգը և ֆինանսական պայմանները:

Սույն Համաձայնագրի դրյույթների իրականացման և երկկողմ ծրագրերի ստորագրման պատասխանատու իրավասու մարմիններն են.

Լիտվայի Հանրապետությունում՝ Լիտվայի Հանրապետության մշակույթի նախարարությունը,

Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը, երկկողմ ծրագրերի շրջանակներում իրենց հնարավորությունների սահմաններում կաջակցեն թատերախմբերի, երաժիշտների հյուրախաղերին և ներկայացումներին, արվեստի և թանգարանային ցուցադրությունների, փառատոների, մրցույթների, տոնավաճառների, կոնֆերանսների, սեմինարների և պրոֆեսիոնալ և ազգագրական արվեստի բնագավառում այլ միջոցառումների փոխանակումներին:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը, սույն Համաձայնագրի շրջանակներում, իրենց հնարավորությունների սահմաններում կաջակցեն միմյանց ազգային թատրոնների, համերգային կազմակերպությունների, մշակութային ժառանգության օբյեկտների պահպանության հաստատությունների,

գրադարանների, թանգարանների և այլ մշակույթի և արվեստի հաստատությունների միջև համագործակցությանը:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը կնպաստեն երկու երկրների ստեղծագործական միությունների, ինչպես նաև մշակույթի և արվեստի գործիչների միջև փոխհարաբերությունների զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերն իրենց հնարավորությունների սահմաններում փոխադարձաբար կհրավիրեն մյուս կողմի մշակույթի և արվեստի գործիչների, գիտնականների և մասնագետների՝ մասնակցելու համաժողովների, փառատոների, տոնավաճառների և երկու երկիրներում կազմակերպվող այլ միջազգային միջոցառումների:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը կնպաստեն իրենց թանգարաններում, գրադարաններում և արխիվներում պահվող մշակութային արժեքների հավաքածուների մատչելիությանը:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը կկհամագործակցեն մշակութային ժառանգության պահպանության ոլորտում և միջոցներ կձեռնարկեն իրենց երկրներից ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերադարձման ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերն իրենց հնարավորությունների սահմաններում կնպաստեն երկու երկրների կինեմատոգրաֆային կազմակերպությունների և կինեմատոգրաֆների միջև համագործակցությանը, ինչպես նաև կինոյի և այլ տեսողական արվեստի արտադրության փոխանակումներին,

մասնակցությանը փառատոներին, գովազդային նյութերի, ամսագրերի և սույն բնագավառի այլ հրատարակությունների փոխանակմանը:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերը կփոխանակեն մշակույթի և արվեստի բնագավառներին վերաբերող հետազոտությունների մասին տեղեկատվություն՝ գիտական փոխանակումների և համագործակցության տարբեր ձևերի և ուղիների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 11

Կողմերը կհամագործակցեն միմյանց և համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության նպատակով՝ մասնավորապես հեղինակային իրավունքի բնավառում:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերը սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված վեճերը կկարգավորվեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 13

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխություններն ու լրացումները կձևակերպվեն առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածում սահմանված ընթացակարգերն ավարտելուց հետո և կհանդիսանան Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված ներքին